

«ՁՀԵՌԱՆԱՆՔ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ»
(Քարոզ՝ խոսված մարտի 13-ին, Անիրավ դատավորի կիրակի օրը)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Պարտ է յամենայն ժամ կալ յաղօթս և մի ձանձրանալ»:

«Պետք է ամեն ժամ աղոթքի կանգնել ու չձանձրանալ» (Ղուկ. ԺԸ 1):

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր,

Մեծի Պահոց այս կիրակի օրվա ողջ խորհուրդը խտացված ու ամփոփված է այս սեղմ տողերի մեջ, կիրակի, որը խորհրդանշանաբար կոչվում է «Անիրավ դատավորի» կիրակի և իր մեջ կրում է մի հավիտենական ճշմարտություն, որն է՝ աղոթքի ու խոկման կարևորությունը մարդկային կյանքից ներս: Մեծի Պահոց կիրակիների շղթայում «Անիրավ դատավորի» կիրակին իր ուրույն տեղն ու նշանակությունն ունի, քանզի մեզ օգնում է Մեծի Պահոց շրջանն անցկացնել առավել արժեվորված ու առավել նպատակային:

Մեր հետևում մնացին արդեն Մեծի Պահոց չորս կիրակիները, երբ մենք քայլ առ քայլ, փուլ առ փուլ նախ հիշեցինք մեր նախահայրերի անուղարտ ու անապական կյանքը եդեմական պարտեզում, ապա զգացինք նաև սարսուռը նրանց, երբ վերջիններս վտարվեցին ու արտաքսվեցին դրախտից, ուրախացանք Անառակ որդու առակի հետևում թաքնված այն խորհրդով, թե դրախտի ճանապարհը վերջնականապես փակված չէ, այլ երկնավոր Հայրը սպասում և ակնկալում է մեր վերադարձը: Իմացանք նաև, որ վերադարձի այդ ճանապարհն ընկած է այս աշխարհի փորձություններով լեցուն հարահոսուն ընթացքի մեջ, երբ մենք յուրաքանչյուրս, որպես Աստծո կողմից նշանակված տնտեսներ, պարտքն ու պարտականությունը ունենք աշխատելու ու գործելու և այս աշխարհում երկնային լույսը շատացնելու: Եվ ահա այսօր ընդունում ենք նաև այն իրողությունը, որ դարձի այդ ճանապարհը գործերից բացի ընդգրկում է նաև մեկ այլ ոլորտ, որ է՝ հոգևոր, աղոթական, ներանձնական ոլորտը:

Եվ այդ ամենը մեզ բացահայտվում է այսօրվա առակի բովանդակության ու այդ բովանդակության հետևում թաքնված խորհրդի մեջ: Այդ ա-

ռակը, որը մյուս աքանչելի առակների հետ միասին մեզ է փոխանցում Ս. Ղուկաս Ավետարանիչը, կոչվում է Անիրավ դատավորի առակ, որտեղ խոսվում է այն մասին, թե մի քաղաքում ապրում էր մի այրի կին՝ հալածված ու տառապած: Նա մի դատ ուներ, մի հայց ուներ, որով մշտապես դիմում էր քաղաքի դատավորին և ունկնդրություն էր խնդրում: Իսկ դատավորը մի մարդ էր, որ Ավետարանի խոսքերով «ո՛չ Աստծուց էր վախենում, ո՛չ մարդկանցից էր ամաչում»: Եվ որպես նյութին ու մամոնային ծառայող մարդ, զգալով ու հասկանալով, որ այրի կնոջից որևէ նյութական ստանալիք չի կարող ունենալ, մշտապես մերժում էր նրան և իր դուռը փակում նրա առջև: Սակայն այրի կինն իր համառ թախանձանքներով վերջիվերջո հասնում է իր նպատակին, քանզի անիրավ դատավորը մի օր անդրադառնում է այդ ողջ ընթացքին և իր մտքի մեջ խորհելով ասում՝ «թեև ես Աստծուց չեմ վախենում ու մարդկանցից չեմ ամաչում, սակայն որպեսզի գոնե իմ գլուխը հանգիստ լինի ու այլևս թախանձանքներ չլսեմ, որպեսզի այլևս այս այրի կինն ինձ չանհանգստացնի, այս դատը տեսնեմ, պաշտպանեմ, որպեսզի սրանից հետո հանգիստ ունենամ»:

Առակի այս բովանդակության հետևում թաքնված խորհուրդն Աստվածորդին՝ Քրիստոս, բացատրում է հետևյալ կերպ. եթե այդ քաղաքի դատավորը, որն անիրավ էր, իր անիրավության մեջ ստիպված եղավ ականջալուր լինել ու տեղի տալ կնոջ թախանձանքներին, ուրեմն որքա՞ն առավել ևս մեր երկնավոր Հայրը, մեր երկնավոր դատավորը, Նա, ով իրավացի է, արդար, անաչառ ու նաև մշտապես ու հավիտենապես բարի, որքա՞ն առավել ևս կլսի մեր խնդրանքներն ու աղոթքները, որոնք մենք ուղղում ենք Իրեն...

Այս իրականությունը շատերի կողմից այսօր թերևս մերժվում է և շատերի կողմից արհամարհվում, քանզի այսօրվա մարդն իրեն իրավունք է վերապահում ժամանակ չտրամադրել աղոթելուն, քանզի աղոթքն ու խոկումը համարում է երկրորդական կամ երրորդական մի գործ, մինչ առաջին պլան է մղվում նյութական հոգսերի բավարարումն ու կարիքների ապահովումը: Մենք բոլորս մեր կյանքում այս իրականության վկաներն ու դերակատարներն ենք:

Այո՛, այսօր մեր կյանքը լի է ամեն տեսակի դժվարություններով: Մեզանից յուրաքանչյուրը էլեկտրական լուսավորության անջատվելուց հետո ընդվզում ու դժգոհություն է ունենում կյանքի նկատմամբ: Մեզանից յուրաքանչյուրը մեր բնակարաններում պատշաճ ջերմության պակասելու դեպքում դառը ցավ ու կսկիծ է ապրում, քանզի մեր առողջությունը դրվում է վտանգի տակ: Մենք ցասում ու բողոք ենք ապրում, երբ մեր հանապազօրյա հացի բաժինն օրավուր պակասում է, և մենք չենք կարողանում մեր նվազագույն կարիքներն ապահովել: Մեր ամեն քայլափոխին կարող ենք հանդիպել դժգոհ ու վրդովված մարդկանց, ովքեր դառը ցավ ու վիշտ են ապրում իրենց կյանքում տեղ գտած պակասների ու թերությունների համար:

Սակայն զարմանալիորեն (և այստեղ թաքնված է մարդկային կյանքի անհասկանալի շերտերից մեկը) մեզանից գրեթե ոչ ոք ընդվզում ու դժգոհություն չի ապրում, երբ մեր կյանքից պակասում է ճշմարիտ երկնային լույսի ներկայությունը: Մեզանից գրեթե ոչ ոք ցավ ու կսկիծ չի ապրում, երբ հեռանում է ավետարանական ջերմագին ճշմարտություններից ու իր սիրտն ու հոգին սառեցնում այդ ճշմարտությունների հանդեպ՝ իր հոգու

առողջությանն անուղղելի վնաս հասցնելով: Մեզանից գրեթե ոչ ոք ցաւում ու բողոք չի ունենում, երբ մեր կյանքում պակասում է կենաց հացը, որ է՝ Քրիստոս, և որը մեզ հոգու սովի է առաջնորդում: Մեզանից գրեթե ոչ ոք չի անդրադառնում իր հոգեկան կյանքում տեղ գտած պակասություններն ու թերությունները վերացնելուն:

Ահա աղոթքը հենց նրա համար է, որ մարդկային կյանքում երբեք չպակասի երկնային լույսը, ավետարանական ջերմությունը և կենաց հացը, որպեսզի երբեք մարդը չզրկի իրեն կենդանի Աստծո հաղորդակցությունից: Քանզի նյութական բարիքներ ապահովելը կյանքի մի բնագավառն է սոսկ, և Փրկչի խոսքերով ասած՝ «ի՞նչ օգուտ են մարդուն, ով ողջ աշխարհը կշահի, սակայն իր անձը կտուժի»: Եվ Ինքը՝ Հիսուս, թեև Աստվածորդի էր և Աստծո հաղորդակցությունը վայելում էր մշտնջենական ու հավիտենական միության մակարդակի վրա, սակայն որպես կատարյալ մարդ երբեմն առանձնանում էր աղոթքի ու խոկման նպատակով՝ աղոթելու մեծագույն օրինակը տալով մեզ: Ուրեմն յուրաքանչյուր քրիստոնյայի համար մշտապես անառարկելի ու անուրանալի ճշմարտություն պետք է լինի աղոթքի կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ դաջված ամեն մեկի սրտի տախտակի վրա:

Այստեղ ներկաներից շատերը գուցե աներկբա կերպով վկայեն, որ իրենք աղոթողների թվին են պատկանում, սակայն վստահաբար շատ քչերն են իրական կերպով հասկանում, թե ինչ է աղոթքը և թե ինչպես պետք է այն մատուցվի: Արդյո՞ք սոսկ իրեն քրիստոնյա համարելն ու խաչակնքելը աղոթք է, արդյո՞ք լոկ մոմ վառելը կարելի է աղոթք համարել, արդյո՞ք Տերունական աղոթքի պարզապես մեխանիկական ընթերցումն ու վերընթերցումը կարող է Աստծո հետ հաղորդակցություն ստեղծել: Սրանք հարցեր են, որոնք ինքնաբերաբար մեզ մղում են աղոթելու ճիշտ եղանակն ու ձևը սովորելու և ըստ այդմ մոտենալու այդ մեծ խորհուրդին: Եվ այս բանի մեջ մեզ օգնում են Ընդհանրական Եկեղեցու սրբազան հայրերը, ովքեր իրենց խորունկ փորձառությամբ ու հավատքի անկրկնելի կրակով մեզ են փոխանցել աղոթքի կանգնելու հստակ եղանակներն ու ձևերը:

Այս հայեցակետից մոտենալով հարցին, տեսնում ենք, որ աղոթքը նախ և առաջ պետք է լինի **երկրպագություն ու պաշտամունք** այդ բառի ամբողջական ու լիակատար իմաստով, որն իր մեջ պետք է ընդգրկի ճշմարիտ աստվածճանաչություն և ի դեմս ճշմարիտ Աստծո՝ մարմնացած Հիսուս Քրիստոսի, երկրպագություն, խոնարհություն ու Նրան ծառայելու, Նրա կամքին հետևելու պատրաստակամություն: Ճշմարիտ աստվածճանաչությունը անհրաժեշտ պայման է, որպեսզի աղոթքը իրապես գտնի իր «հասցեատիրոջը»:

Աղոթքի երկրորդ կարևոր հանգրվանը **խոստովանությունն** է, երբ մարդ զգում է իր մեջ մեղավոր անձի առկայությունը և, ի տես Աստծո անհասանելի մաքրության ու սրբության, զղջման ու ապաշխարության անկեղծ պոռթկում է ապրում՝ Աստծուց խնդրելով թողություն իր մեղքերի ու հանցանքների համար:

Երրորդ կարևոր պայմանը **միջնորդությունն** է: Յուրաքանչյուր քրիստոնյա այս և հանդերձյալ աշխարհում միայնակ չէ. նա շրջապատված է իր նմաններով, իր եղբայրներով ու քույրերով, որոնց նկատմամբ պարտականություններ ու պարտավորություններ ունի: Ուստի իր անձի համար որևէ բան ակնկալելուց առաջ նա ոչ միայն պետք է աղոթի իր հեռու ու մոտիկ

եղբայրների ու քույրերի, անգամ իր թշնամիների, այլև ննջեցյալների հոգիների փրկության ու ողջ աշխարհի բարօրության ու խաղաղ համակեցության համար:

Հուսկ ապա աղոթքը կարող է ընդունել **խնդրանքի** ձև, երբ քրիստոնյան պետք է կենտրոնանա իր սեփական անձի վրա և աղոթի Աստծուն՝ խնդրելով Նրանից ոչ միայն հանապազօրյա հաց ու նյութական բարիքներ, այլև ճշմարիտ գիտություն ու հաղորդակցություն, և «ամենից առաջ երկնքի արքայությունը, քանզի մնացած ամեն ինչ ավելիով կտրվի»:

Եվ վերջապես աղոթքը, սկսվելով աստվածակենտրոն մոտեցումով, դարձյալ պետք է մտասևեռվի Աստծո վրա և ստանա **գոհության** իրական ձև ու արտահայտություն, քանզի աղոթողը պետք է ընդունի այն իրականությունը, որ իր ունեցած ողջ նյութական, մտավոր ու հոգևոր հարստությամբ պարտական է միմիայն երկնավոր Հորը, և ըստ այդմ պետք է գոհություն ու շնորհակալություն վերառաքի առ Աստված իր վայելած բարիքների համար:

...Այս ամենից հետո թող ձեզանից ամեն մեկը իր մտքում ու սրտում քննի և հասկանա, թե արդյո՞ք այն, ինչ ինքը մինչև այժմ աղոթք էր անվանում, համապատասխանում է Եկեղեցու հայրերի մշակած մոտեցմանը: Եվ եթե պատասխանը հաստատական է, ապա մնում է ամենակարևորն ու էականը, այն, որ աղոթքի ներանձնական ապրումին է վերաբերում:

Անապատականության ու ճգնավորության հայրերից մեկը՝ Ս. Նեղոս Սինայեցին, որի աղոթքի սլացքին թերևս շատ քչերն են հասել, աղոթելու եղանակի մասին 150 ցուցումներ ունի, որոնք ավարտվում են հետևյալ խոսքով. «Երբ, կանգնելով աղոթքի, զգում ես մի ուրախություն, որ վեր է այս աշխարհի բոլոր ուրախություններից, այնժամ իսկապես ձեռք ես բերել սուրբ աղոթքը»:

Սիրելի եղբայրներ և քույրեր, ձեր աղոթքի ու խոկման ընթացքում մշտապես փնտրեցեք այդ ուրախությունը, և ես մաղթում եմ, որ մենք բոլորս հասնենք աղոթքի այն բարձրագույն կատարելությանը, երբ յուրաքանչյուրս մեր հոգում կզգանք այդ վերերկրային ուրախությունը, որը ճշմարիտ անդրադարձն է Աստծո հետ կենդանի հաղորդակցության:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. Ամէն»:

ՄԻՔԱՅԵԼ ՎՐԴ. ԱԶԱՊԱՀՅԱՆ